Հավելված 6
«ՎՊ-ԳՀԱՊՁԲ-21/1-1»* ծածկագրով
գնանշման հարցման մրցույթի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ/ԴԵՂԱՏՆԱՅԻՆ/ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՎՊ-ԳՀԱՊՁԲ-21/1-1

ք. Վանաձոր «_12_» __01_ 2021թ.

ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ Պ ՓԲԸ -ն ի դեմս տնօրեն Ս.Բալայանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նատալի ֆարմ Դեղատուն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արման Ասատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են __5__ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ___5__ օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 12698689 /տասներկու միլիոն վեց հարյուր իննսունութ հազար վեց հարյուր ութսունինը / ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[18] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __5__ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի

---

[18] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[19] *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

մար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[22] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

---

[24] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու մասին պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[25]

---

[25] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

9. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ
«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա » ՊՓԲԸ
Ք.Վանաձոր, Մյասնիկյան 17
<Ինեկոբանկ>Վանաձոր մ/ղ

Հ/Հ 2050223000451001
ՀՎՀՀ 06907013
Տնօրեն՝ Ս.Բալայան

ստորագրություն
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Նատալի Ֆարմ Դեղատուն» ՍՊԸ
Ք. Երևան, Օհանովի փ. 15/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570023994240200
ՀՎՀՀ 00154799
տնօրեն՝ Ա.Ասատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 12 » 01 2021 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հերթական համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
2	33651125	Ազիթրոմիցին	Հեմոֆարմ Ա.Դ., 26300 Վրշաց, Բեոգրադսկիի պուտ ԲԲ	Ազիթրոմիցին (ազիթրոմիցին դիհիդրատ) azithromycin, (azithromycin dihydrate) դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի 200մգ/5մլ, 22հկ	22հկ	1 759,00	87 950,00	50	Ք.Վանաձոր, դեղատուն	50	Հունվար-դեկտեմբերի 25
4	33621450	Ամլոդիպին	Պրանաֆարմ	Ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ) amlodipine (amlodipine besilate) դեղահատ 10մգ	դեղահատ	21,20	424 000,00	20000	Ք.Վանաձոր, դեղատուն	20000	Հունվար-դեկտեմբերի 25
5	33621450	Ամլոդիպին	Բելմեդպրեպարատի	Ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ) amlodipine (amlodipine besilate) դեղահատ 5մգ	դեղահատ	9,48	104 280,00	11000	Ք.Վանաձոր, դեղատուն	11000	Հունվար-դեկտեմբերի 25
7	33651112	Ամոկսիկլավ	Լեկ	ամոկսիցիլին տրիհիդրատ	22հկ	3 831,17	191 558,50	50	Ք.Վանաձ	50	Հունվար-

				կլավուլանաթթույ/կալիումի քլավուլանատ amoxicillin Trihidrat/clavulanik acid/potassium clavulanat/ դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթ 250մգ+62.5մգ/5մլ					որ, դեղատուն		
11	33621420	Ատորվաստատին	ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մ	Ատորվաստատին atorvastatin դեղահատ թաղանթապատ 10մգ	դեղահատ	31,00	155 000,00	5000	Ք.Վանաձոր, դեղատուն	5000	Հունվար-դեկտեմբերի 25
12	33621420	Ատորվաստատին	ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մ	Ատորվաստատին atorvastatin դեղահատ թաղանթապատ 20մգ	դեղահատ	45,00	1 125 000,00	25000	Ք.Վանաձոր, դեղատուն	25000	Հունվար-դեկտեմբերի 25
13	33621420	Ատորվաստատին	ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մ	Ատորվաստատին atorvastatin դեղահատ թաղանթապատ 40մգ	դեղահատ	81,00	648 000,00	8000	Ք.Վանաձոր, դեղատուն	8000	Հունվար-դեկտեմբերի 25
21	33661121	Ացետիլսալիցիլաթթու/թրոմբոպոլ	Պոլֆարմա դեղագործական գործարան Ս.Ա.,Պելպլինսկա 19 փ., 83-200 Ստարոգարդ Գդանսկի	Ացետիլսալիցիլաթթու, acetylsalicylic acid դեղահատ թաղանթապատ, աղելույծ 75մգ	դեղահատ	41,98	1 679 200,00	40000	Ք.Վանաձոր, դեղատուն	40000	Հունվար-դեկտեմբերի 25
23	33621720	Բիսոպրոլոլ	Մակիզ-Ֆարմա ՍՊԸ, 109029, Մոսկվա, Ավտոմոբիլնի պրոեզ	Բիսոպրոլոլ (բիսոպրոլոլի ֆումարատ) bisoprolol (bisoprolol fumarate) դեղահատ 5մգ	դեղահատ	19,00	1 140 000,00	60000	Ք.Վանաձոր, դեղատուն	60000	Հունվար-դեկտեմբերի 25
24	33621720	Բիսոպրոլոլ	Մակիզ-Ֆարմա ՍՊԸ, 109029, Մոսկվա, Ավտոմոբիլնի պրոեզ	Բիսոպրոլոլ (բիսոպրոլոլի ֆումարատ) bisoprolol (bisoprolol fumarate) դեղահատ 10մգ	դեղահատ	27,00	243 000,00	9000	Ք.Վանաձոր, դեղատուն	9000	Հունվար-դեկտեմբերի 25
30	33631310	Դիկլոֆենակ	Արմավիրի կենսաբանական ֆաբրիկա	Դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) diclofenac (diclofenac sodium) լուծույթ ներարկման 25 մգ/մլ, 3մլ ամպուլա	ամպուլա	30,53	33 583,00	1100	Ք.Վանաձոր, դեղատուն	1100	Հունվար-դեկտեմբերի 25
34	33621520	Էնալապրիլ 20մգ	Հեմոֆարմ ՍՊԸ, 249030, Օբնինսկ,	Էնալապրիլ (էնալապրիլի մալեատ) enalapril (enalapril	դեղահատ	19,98	199 800,00	10000	Ք.Վանաձոր,	10000	Հունվար-դեկտեմբե

			Կալուգա շրջան, Կիևսկոյե մայրուղի 62	maleate) դեղահատ 20մգ					դեղատուն		
38	33631290	Իբուպրոֆեն	Հեմոֆարմ Ա.Դ., 26300, Վրշաց, Բեոգրադսկիի պուտ բբ՝ բաց թողնման հսկող, Հեմոֆարմ դ.օ.օ., 78000, Բանյա-Լուկա, Նովակովիչի բբ, Բոսնիա և Հերցեգովինա՝ դեղաձևն	Իբուպրոֆեն, ibuprofen դեղահատ թաղանթապատ 400մգ	դեղահատ	22,42	134 520,00	6000	Ք.Վանաձոր, դեղատուն	6000	Հունվար-դեկտեմբերի 25
42	33691260	Լամոտրիջին	Ալկալոիդ-ԻՆՏ դ.օ.օ., Սլանդրովա փ. 4, 1231 Լյուբլյանա-Սրնուս, Սլովենիա - բաց թողնման հսկող (դեղաձևն արտադրող, փաթեթավորող - Ալկալոիդ ԱԴ-Սկոպյե, բուլ. Ա	լամոտրիջին 100մգ	դեղահատ	175,00	175 000,00	1000	Ք.Վանաձոր, դեղատուն	1000	Հունվար-դեկտեմբերի 25
43	33691203	Լոզարտան	ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո	լոզարտան 50մգ	դեղահատ թաղանթապատ	39,00	234 000,00	6000	Ք.Վանաձոր, դեղատուն	6000	Հունվար-դեկտեմբերի 25
44	33691203	Լոզարտան	ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարյեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո	Լոզարտան100մգ	դեղահատ թաղանթապատ	69,00	420 900,00	6100	Ք.Վանաձոր, դեղատուն	6100	Հունվար-դեկտեմբերի 25
47	33621690	Կարվեդիլոլ	Գրինդեկս ԲԸ, Կրուստպիլս փ. 53, ԼՎ-1057, Ռիգա	Կարվեդիլոլ, carvedilol դեղահատ 12,5մգ,	դեղահատ	23,98	479 600,00	20000	Ք.Վանաձոր, դեղատուն	20000	Հունվար-դեկտեմբերի 25
50	33621140	Կլոպիդոգրել	Թուֆենկջի Գրուպ ՍՊԸ	Կլոպիդոգրել (կլոպիդոգրելի բիսուլֆատ) clopidogrel	դեղահատ	91,00	1 638 000,00	18000	Ք.Վանաձոր,	18000	Հունվար-դեկտեմբե

				(clopidogrel bisulfate) դեղահատ թաղանթապատ 75մգ					դեղատուն		
54	33642220	Մեթիլպրեդնիզոլոն	Պֆայզեր Իտալիա Ս.Ռ.Լ., Լոկալիտա Մարինո դել Տոռնտո 63100 Ասկոլի Պիցենո	Մեթիլպրեդնիզոլոն 4մգ	դեղահատ	52,00	156 000,00	3000	Ք.Վանաձոր, դեղատուն	3000	Հունվար-դեկտեմբերի 25
59	33661122	Պարացետամոլ	Նիժֆարմ ԲԲԸ, 603950, ք. Նիժնի Նովգորոդ, ԳՍՊ-459, Սալգանսկայա փ., 7	Պարացետամոլ, Paracetamol, մոմիկներ ուղիղաղիքային 100մգ	մոմիկ	39,00	1 950,00	50	Ք.Վանաձոր, դեղատուն	50	Հունվար-դեկտեմբերի 25
63	33642210	Պրեդնիզոլոն	Բելմեդպրեպարատի ՀՈՒՁ (220007, Մինսկ, Ֆաբրիտսիուս փ., 30)¶	Պրեդնիզոլոն Prednisolone դեղահատ 5 մգ	դեղահատ	7,20	19 440,00	2700	Ք.Վանաձոր, դեղատուն	2700	Հունվար-դեկտեմբերի 25
65	33671113	Սալբուտամոլ	Բինոֆարմ ԲԸ, 3, շ. 1, Կոնստրուկտորա Գուսկովա փ., Զելենոգրադ, Մոսկվա, 124460, Ռուսաստան	Սալբուտամոլ (սալբուտամոլ սուլֆատ) salbutamol (salbutamol sulfate) ցողացիր շնչառման, դեղաչափավորված 100մկգ/դեղաչափ,	ցողացիր շնչառման	1 073,25	160 987,50	150	Ք.Վանաձոր, դեղատուն	150	Հունվար-դեկտեմբերի 25
66	33621620	Սպիրոնոլակտոն	Ռեմեդիկա ՍՊԸ, Լիմասոլ Ինդուստրիալ Իստեյտ, Ահարնոն փ., 3056 Լիմասոլ¶	Սպիրոնոլակտոն, Spironolactone, դեղահատ 25 մգ	դեղահատ	29,89	448 350,00	15000	Ք.Վանաձոր, դեղատուն	15000	Հունվար-դեկտեմբերի 25
70	33691176	Ակվավիտ /մլ 10մլ	«Տեխնոլոգ» ՀԲԸ, Մանուիլսկոգո փ. 8, 20300 Ուման, Չե	խոլեկալցիֆերոլ լուծույթ ներքին ենդունման 1500ՄՄ/մլ 10մլ	հատ	1 250,00	1 875 000,00	1500	Ք.Վանաձոր, դեղատուն	1500	Հունվար-դեկտեմբերի 25
72	33621390	Ամիոդարոն	Էս Այ Սի "Բորշչագովյան քիմիադեղագործա-կան գործարան" ՀԲԸ	Ամիոդարոն (ամիոդարոնի հիդրոքլորիդ) amiodarone (amiodarone hydrochloride) դեղահատ 200մգ	հատ	47,70	166 950,00	3500	Ք.Վանաձոր, դեղատուն	3500	Հունվար-դեկտեմբերի 25
75	33651131	Սուլֆամեթոքսազոլ + տրիմեթոպրիմ	Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Մասիս, Մասիս Կայարան, Գործարանային	Սուլֆամեթոքսազոլ, տրիմեթոպրիմ Sulfamethoxazole, trimethoprim, դեղակախույթ ներքին	հատ	810,00	16 200,00	20	Ք.Վանաձոր, դեղատուն	20	Հունվար-դեկտեմբերի 25

			22¶	ընդունման 200մգ/5մլ+40մգ/5մլ, 22հկ							
86	33621370	իզոսորբիդի դինիտրատ	Աեսիկա Ֆարմասյուտիկալս ԳմբՀ, Ալֆրեդ-Նոբել շտրասե 10, 40789 Մոնհեյմ - բաց թողնման հսկող (դեղաձևն արտադրող - Աեսիկա Ֆարմասյուտիկալս ԳմբՀ, Գայիլեյշտրասե 6	Իզոսորբիդի դինիտրատ, Isosorbide Dinitrate դեղահատ երկարատև ձերբազատմամբ 20մգ,	հատ	26,14	78 420,00	3000	Ք.Վանաձոր, դեղատուն	3000	Հունվար-դեկտեմբերի 25
93	33691203	Լոզարտան	ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո	լոզարտան (լոզարտանի կալիում), հիդրոքլորոթիազիդ , 100 մգ+25մգ, դեղահատ	հատ	104,00	520 000,00	5000	Ք.Վանաձոր, դեղատուն	5000	Հունվար-դեկտեմբերի 25
98	33691189	Բետահիստին	Մեդանա Ֆարմա ԲԸ, 98-200 Սիերադզ Վ. Լոկիետկա 10, Լեհաստան	Բետահիստին / Betahistine/դեղահատ,24 գ	հատ	71,00	142 000,00	2000	Ք.Վանաձոր, դեղատուն	2000	Հունվար-դեկտեմբերի 25

***ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Համաձայն ՀՀ Կառավարության 2013 թվ.-ի մայիսի 2-ի N 502-Ն որոշման 7-րդ կետի՝ դեղի պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը**

՝ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,

բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը

. Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն որոշման սահմանվում է սպասարկման տարածքում գործող՝ մինչև 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն հետևյալ հասցեում՝ Տիգրան Մեծի

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

** Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկ
ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայաց
նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ
նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա » ՊՓԲԸ
Ք.Վանաձոր, Մյասնիկյան 17
<Ինեկոբանկ>Վանաձոր մ/ղ

Հ/Հ 2050223000451001
ՀՎՀՀ 06907013
Տնօրեն՝ Ս.Բալայան

ստորագրություն

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ Դեղատուն» ՍՊԸ
Ք. Երևան, Օհանովի փ. 15/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570023994240200
ՀՎՀՀ 00154799
տնօրեն՝ Ա.Ասատրյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների /%/													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
2	33651125	Ազիթրոմիցին			10	20	30	40	50	60	70	80	90	100	100	
4	33621450	Ամլոդիպին			10	20	30	40	50	60	70	80	90	100	100	
5	33621450	Ամլոդիպին			10	20	30	40	50	60	70	80	90	100	100	
7	33651112	Ամոկսիկլավ			10	20	30	40	50	60	70	80	90	100	100	
11	33621420	Ատորվաստատին			10	20	30	40	50	60	70	80	90	100	100	
12	33621420	Ատորվաստատին			10	20	30	40	50	60	70	80	90	100	100	

13	33621420	Ատորվաստատին			10	20	30	40	50	60	70	80	90	100	
21	33661121	Ացետիլսալիցիլաթթու/թրոմբոպոլ			10	20	30	40	50	60	70	80	90	100	10
23	33621720	Բիսոպրոլոլ			10	20	30	40	50	60	70	80	90	100	100
24	33621720	Բիսոպրոլոլ			10	20	30	40	50	60	70	80	90	100	100
30	33631310	Դիկլոֆենակ			10	20	30	40	50	60	70	80	90	100	100
34	33621520	Էնալապրիլ 20մգ			10	20	30	40	50	60	70	80	90	100	100
38	33631290	Իբուպրոֆեն			10	20	30	40	50	60	70	80	90	100	100
42	33691260	Լամոտրիջին			10	20	30	40	50	60	70	80	90	100	100
43	33691203	Լոզարտան			10	20	30	40	50	60	70	80	90	100	100
44	33691203	Լոզարտան			10	20	30	40	50	60	70	80	90	100	100
47	33621690	Կարվեդիլոլ			10	20	30	40	50	60	70	80	90	100	100
50	33621140	Կլոպիդոգրել			10	20	30	40	50	60	70	80	90	100	100
54	33642220	Մեթիլպրեդնիզոլոն			10	20	30	40	50	60	70	80	90	100	100
59	33661122	Պարացետամոլ			10	20	30	40	50	60	70	80	90	100	100
63	33642210	Պրեդնիզոլոն			10	20	30	40	50	60	70	80	90	100	100
65	33671113	Սալբուտամոլ			10	20	30	40	50	60	70	80	90	100	100
66	33621620	Սպիրոնոլակտոն			10	20	30	40	50	60	70	80	90	100	100
70	33691176	Դետրիմեդ կաթ.15000մմ/մլ 10մլ			10	20	30	40	50	60	70	80	90	100	100
72	33621390	Ամիոդարոն			10	20	30	40	50	60	70	80	90	100	100
75	33651131	Սուլֆամեթօքսազոլ + տրիմեթոպրիմ			10	20	30	40	50	60	70	80	90	100	100
86	33621370	իզոսորբիդի դինիտրատ			10	20	30	40	50	60	70	80	90	100	100
93	33691203	Լոզարտան			10	20	30	40	50	60	70	80	90	100	100
98	33691189	Բետահիստին			10	20	30	40	50	60	70	80	90	100	100

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա » ՊՓԲԸ
Ք.Վանաձոր, Մյասնիկյան 17
<Ինեկոբանկ>Վանաձոր մ/ղ

Հ/Հ 2050223000451001
ՀՎՀՀ 06907013
Տնօրեն՝ Ս.Բալայան

ստորագրություն

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ Դեղատուն» ՍՊԸ
Ք. Երևան, Օհանովի փ. 15/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570023994240200
ՀՎՀՀ 00154799
տնօրեն՝ Ա.Ասատրյան

/ստորագրություն/

Կ.Տ